ՎՐՉՆԻ ՀԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐ
АРМЯНСКИЕ МАСТЕРА КИСТИ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

1817—1900

ИВАН (ОВАНЕС) АЙВАЗОВСКИЙ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆԴ
«ԷՐԵԲՈՒՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1989
АРМЯНСКИЙ ФОНД КУЛЬТУРЫ
ИЗДАТЕЛЬСТВО «ЭРЕБУНИ»

Այվազովսկու արվեստը մարդու և մարդկայնության արվեստ է, ճնշման ու դեսպոտիզմի ժխտում: Նա ազատության անհագ ծարավի, նրա փառաբանման նկարիչն է, բնության մեծ սիրո երգիչը:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

Առանձնահատուկ է Հովհաննես (Իվան) Այվազովսկու տեղը 19-րդ դարի ռոմանտիկական արվեստում: Քսանհինգամյա տարիքում նա նվաճել է համաշխարհային համբավ, ընտրվել եվրոպական հինգ ակադեմիաների անդամ, արժանացել ֆրանսիական պատվո լեգիոն շքանշանի: Դելակրուան նրա մասին արտահայտվել է ակնածանքով, Թեորները անվանել հանճար:

Այվազովսկու անունը կապված է ծովին: «Ջուրը իր անօրինակ գեղեցկությամբ, կենդանի զգացումով ու յուրատեսակ արտահայտչականությամբ թերևս ոչ ոք Եվրոպայում այնպես չի պատկերել, ինչպես Այվազովսկին»,— գրել է Վ. Ստասովը:

Իր լավագույն ծովանկարներում (վեց հազարի հասնող ժառանգության մեջ կան և իր կարողություններին զիջող գործեր, և գեղարվեստական բացարձակ արժեքներ) նա բացահայտել է ժամանակի ոգով ապրող իր ներաշխարհը, իր բնապաշտական, պայքարի ու ազատասիրական իդեալները: Այդպիսին է եղել նկարիչը նաև կյանքում: Ճնշվող ժողովուրդների հանդեպ տածած սերը, անձնական օգնությունը, հանրօգուտ անչափելի գործունեությունը դարձնում են նրան իր դարի իսկական որդին, բացառիկ անհատականություն:

Այվազովսկին ծնվել է Ղրիմի Թեոդոսիա քաղաքում, հայկական ընտանիքում*: Քսան տարեկան ոսկե մեդալով ավարտել է Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան: Գործուղվել է Իտալիա կատարելագործվելու և վերադարձել՝ միջազգային ճանաչում գտած ծովանկարիչ: Ցարական ար-

* Նկարչի նախնիները գրվել են Այվազյան. հայրը՝ Հայվազովսկի: 1841-ին նկարիչն ու ավագ եղբայրը՝ Գաբրիելը, որը եղել է հայտնի բանասեր, պատմաբան, թարգմանիչ, արքեպիսկոպոս, որոշում են գրվել Այվազյան կամ Այվազովսկի: Նկարիչը որոշ նկարների տակ ստորագրել է հայերեն՝ Հովհաննես Այվազյան:

քունիքն ու նյութական ապահովությունը նրան չեն գայթակղում: Գալիս է հայրենի քաղաք, ծովի ափին տուն-արվեստանոց է կառուցում (1845) ու նվիրվում սիրած գործին, աշխատելով մինչև կյանքի վերջին օրը: Աշխարհի տարբեր քաղաքներում, գրեթե ամեն տարի Այվազովսկին հանդես է գալիս ցուցահանդեսներով: Նա փառք է նվաճում իբրև ռուսական արվեստի ներկայացուցիչ, մեծապես նպաստում ռուսական արվեստի ճանաչմանը:

Մեծ ծովանկարչի արվեստում դրսևորում են գտնում հայկական արվեստի ավանդներից ու իր խառնվածքից բխող այնպիսի գծեր, որոնք պայմանավորում են նրա արվեստի ինքնատիպությունը ու այն անբաժան դարձնում իրեն ծնող ժողովրդից: Այս առիթով Ն. Նովոուսպենսկին գրում է. «Այվազովսկու մոտ արտահայտություն ստացան նաև հայ ժողովրդի հինավուրց մշակույթի ու ազգային բնավորության գծեր, ժողովուրդ, որի հավատարիմ զավակը մնաց նա մինչև իր կյանքի ավարտը»:

Դարի երկրորդ քառորդի սկզբում Արևելյան Հայաստանը, ռուս-պարսկական պատերազմից հետո միացավ Ռուսաստանին: Արևմտյան Հայաստանը շարունակեց մնալ թուրքական լծի տակ: Հունաստանում և Բալկանյան երկրներում ծայր առած ազատագրական շարժումները խթան դարձան հայ ժողովրդի համար: Հոգևոր կյանքի վերելքը իր արտացոլումը գտավ գրականության և արվեստի մեջ:

Կրթություն ստանալով եվրոպական և ռուսական դպրոցներում (Այվազովսկին եղել է առաջիններից մեկը) հայ նկարիչները ազգային արվեստ ներբերին պատկերման նոր մեթոդներ, որոնք ձուլվելով իրենց խառնվածքին յուրովի կիրառում գտան: Արվեստի օրինաչափ զարգացումը այդ պրոցեսը հետզհետե պիտի հանգեցներ գեղարվեստական լեզվի ազգային դիմագծի հստակացմանն ու բյուրեղացմանը:

Այվազովսկին չձերբազատվեց ակադեմիական նկարչությանը հատուկ որոշ կանոններից, բայց ստեղծագործության արդեն վաղ շրջանում հասավ իրականության կենդանի ու հուզական ընկալման: Նկարչի ինքնատիպ արտահայտչական լեզուն, որ հատկանշվում է ապշեցուցիչ վարպետությամբ, լիովին ներդաշնակ էր նրա ստեղծագործական մեթոդին: Նա մանկուց ճանաչում, կրքոտ սիրում էր ծովը, գիտեր նրա շարժման գաղտնիքները և աշխատելիս օգտվում էր միայն հիշողության նատուրայից: Իր արվեստին բարձր արժեք տվող բոլոր լավագույն գործերը ստեղծվել են երևակայությամբ: Փաստորեն Այվազովսկին ոչ թե վերարտադրել է ծովը, այլ նրա մասին «պատմել» իր մեջ ապրող իրականությունը, իր «հեքիաթները», որոնք, ինչպես իրական հեքիաթներ, որոշակի սիմվոլիկ խորհուրդ են կրում: Այվազովսկու արվեստում իբրև ստեղծագործական ելակետ նշանակալի է նախնիներից ժառանգած բնության ժողովրդական, բանաստեղծական, հեքիաթային ընկալումները:

Այսպիսով, ակադեմիական դպրոց անցած, բայց հոգով ռոմանտիկ Այվազովսկին իր ժամանակի արվեստ մուտք գործեց ղեկավարվելով աշխարհընկալման սեփական օրենքներով:

Մեծ ծովանկարչի պատկերների լուսային կախարդիչ մթնոլորտը օգնում է հաղորդվելու նրա արվեստի երազային նկարագրին: Ծովի անդորր տեսարաններում, մարդն հանդես է գալիս երբեմն ափով միայնակ քայլելիս, երբեմն ծովափին նստած, հեռուն՝ լույսին հառած երազկոտ հայացքով: «Մխիթարյանները Սբ. Ղազար կղզում» կտավում, օրինակ, կըղզին իր ուրվագծով վերջալույսի մեջ լողացող նավի տպավորություն է թողնում, իսկ մարդիկ հույսի ու երազի ճամփորդներ:

Լույսի գաղափարը խիստ նշանակալից է Այվազովսկու մոտ: Ուշադիր դիտողը կզգա, որ պատկերելով ալիքներ, ամպեր ու օդային տարածություն, Այվազովսկին առավելապես լույսն է շեշտում: Նրա արվեստում լույսը կյանքի, հույսի ու հավատի խորհրդանիշ է, հավերժականի խորհրդանիշ: Հայ մշակույթի մեջ հեռավոր ակունքներ ունեցող արարիչ լույսի, լույս իմանալիի վերիմաստավորումն է դա, աներեր մի ավանդություն, որ շքեղ արտահայտություն ստացավ նաև հաջորդ սերնդի հայ նկարիչների մոտ: Լուսերգության ավանդները նկարչին են հասել միջնադարյան բանաստեղծների երգերից, որոնք նա գիտեր և միշտ լսում էր հայկական եկեղեցիներում: Այվազովսկու վերջին նկարներում («Ալիքների մեջ») լույսն իջնում է անտեսանելի աղբյուրից, իբրև խավարը ակոսող և հույսը հաստատող հզոր ճառագայթ:

Ահեղ փոթորիկները, որոնք կազմում են Այվազովսկու ժառանգության կեսից ավելին, ասես իբրև կանոն ներկայացվում են տարերքի դեմ պայքարող, իրար օգնող մարդկանց առկայությամբ: Մարդը չի հանձնվի, մարդը կհաղթի,— նկարչի այս կենսապաշտության մեջ իրենց արտացոլումն են գտել ժողովրդական բնավորությանը հատուկ խոր լավատեսությունն ու տոկունությունը: Այվազովսկու ռոմանտիկայի հենքը տիեզերքի փոքրիկ էակի՝ մարդու հավատն է բնության ու կյանքի նկատմամբ, 19-րդ դարի քաղաքական ալեբախումների մեջ իր ազատության համար մաքառող հայ ժողովրդի անկոտրում հավատը:

Նկարչի ստեղծագործական հավատամքը՝ պայքարի ու ազատատենչ ոգին, որքան ժամանակի արտահայտություն էր, նույնքան ուներ իր արմատները, կապված էր իր ժողովրդի ճակատագրին ու պատմությանը: Հույն ժողովրդի պայքարով ներշնչված, նրա փրկությանը նվիրված պատկերներ ստեղծած Այվազովսկին նույնը երազում էր և իր ժողովրդին, կա-

պելով նրա ազատագրումը այն երկրին, որի զավակն էր դարձել, որի պետական ճանաչում գտած գործիչներից էր ինքը: Ինքնին հասկանալի է, որ ամբողջ կյանքում ռուսական նավատորմի հաղթանակները ջերմեռանդորեն գովերգած Այվազովսկու կտավներում, դրսևորում էին ստանում նաև մայր ժողովրդի ճակատագրի հանդեպ ունեցած հավատը:

1895-ին սուլթան Աբդուլ Համիդը «հայկական հարցը» վերացնելու նպատակով կազմակերպում է ցեղասպանություն, որին զոհ են դառնում հարյուր հազարավոր հայեր: Ավերվում, հրկիզվում են մշակութային բազմաթիվ հուշարձաններ: Այս սոսկալի իրողությունը ցնցում է ծերունազարդ Այվազովսկուն: «Խորին կսկիծով վշտացած է սիրտս մեր անբախտ հայոց չլսված, չտեսնված կոտորածով»,— գրում է նա Էջմիածին, Խրիմյան կաթողիկոսին: Նկարիչը ծովն է նետում տարիներ առաջ սուլթանից ստացած շքանշանը: Ստեղծում կոտորած պատկերող կտավներ ու ցուցադրում: Ցավի և ցասման արգասիք է ընկալվում նաև կյանքի վերջին օրը՝ 1900 թ. մայիսի 2-ին նկարած «Թրքական նավի պայթյունը» կտավը, որը մնում է անավարտ:

Այվազովսկու տունը Թեոդոսիայում եղել է մի յուրօրինակ ուխտատեղի: Այստեղ հյուրընկալվել են հայ գրողներ, մեծ ցուցասրահի բեմում հանդես են եկել հայ դերասանական ու երաժշտական արվեստի գործիչներ: Այստեղ են մկրտություն ստանում նկարիչներ Գ. Բաշինջաղյանը, Վ. Սուրենյանցը, ծովանկարիչներ Վ. Մախոխյանը, Ա. Շաբանյանը, Է. Մահդեսյանը: Այվազովսկին երազել է ստեղծել միություն ու նրա շուրջ համախմբել աշխարհով մեկ սփռված հայ արվեստագետներին:

Ստեղծագործական երկար կյանքի ընթացքին և հատկապես 1868 թ. Անդրկովկաս ճամփորդելուց հետո Այվազովսկին ստեղծել է հայկական թեմաներով տասնյակ կտավներ ու դիմանկարներ: Թիֆլիսի կենցաղը, Սևանա լիճը, Արարատն ու Արարատյան դաշտը ներկայացնող բնանկարներով նկարիչը սկիզբ է դնում և խթանում այդ ժանրի զարգացումը հայ կերպարվեստում: Դավանելով հայ առաքելական եկեղեցուն Այվազովսկին մի ամբողջ շարք պատկերներ է վրձնել նաև Աստվածաշնչի, ինչպես նաև հայ պատմական անցյալի թեմաներով (այդ գործերից երկուսը՝ 21, 22 ցուցադրվել են Թեոդոսիայի հայկական եկեղեցիներից մեկում և հետապնդել են ժողովրդի մեջ հայրենասիրական զգացմունքներ ներշնչելու նպատակ):

Դիտարկելով Այվազովսկու արվեստը իր ամբողջության մեջ պիտի ասել, որ անկարելի է առանց նրա տեսնել 19-րդ դարի հայկական նկարչությունը: Իսկ սոսկ իբրև ռուսական նկարիչ անկարելի է լիովին բացահայտել նրա ստեղծագործական դեմքը առանց իր արվեստի հայկական ակունքների: Ահա թե ինչու պատկանելով ռուսական մշակույթին, Այվազովսկին միաժամանակ պատկանում է հայ մշակույթին: Նման օրինակներ քիչ չեն համաշխարհային արվեստի պատմության մեջ: Այս դեպքում ավելին՝ ծովի մեծ երգչի արվեստն այսօր ընկալվում է իբրև հայ և ռուս մշակույթների սերտ կապի ամենագեղեցիկ դրսևորումներից մեկը:

Այվազովսկու կտակի համաձայն նրան թաղում են Թեոդոսիայի Սբ. Սարգիս հայկական եկեղեցու բակում: Դամբանագիրը, որ քաղված է Խորենացու «Հայոց պատմությունից», ասում է. «Ծնվեց մահկանացու, թողեց անմահ հիշատակ»: Այվազովսկու «հիշատակը» խտացնում է իր դարաշրջանի ոգին, բոլոր ժամանակների ամենաթանկ՝ հումանիզմի ոգին:

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

I. ՔԱՌՍ. ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ. 1841, կտավ, յուղաներկ 73×108
Մխիթարյան միաբանության թանգարան. Սբ. Ղազար. Վենետիկ

II. ՊԵՏՐՈՍ Ա. ԱՋԴԱՆՇԱՆ Է ՏԱԼԻՍ ԸՆԿՂՄՈՂ ՆԱՎԵՐԻՆ. 1846
կտավ, յուղաներկ 223×335
Պետական Ռուսական թանգարան. Լենինգրադ

III. ԾՈՎԱՓ. 1840. կտավ, յուղաներկ 43×61
Պետական Տրետյակովյան պատկերասրահ. Մոսկվա

IV. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՏԵՍԱՐԱՆ ԼՈՒՍՆԻ ԼՈՒՅՍՈՎ. 1846
կտավ, յուղաներկ 124×192
Պետական Ռուսական թանգարան. Լենինգրադ

V. ՓՈԹՈՐԻԿ ԵԿՊԱՏՈՐԻԱՅԻ ՄՈՏ. 1841, կտավ, յուղաներկ 208×320
Եկատերինյան պալատ-թանգարան. Պուշկին, Լենինգրադ

VI. ԱՐԵՎԱԾԱԳ ԹԵՈԴՈՍԻԱՅՈՒՄ. 1855, կտավ, յուղաներկ 82×117
Հայաստանի պետական պատկերասրահ. Երևան

VII. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՐԸ ՍԲ. ՂԱԶԱՐ ԿՂԶՈՒՄ. ՎԵՆԵՏԻԿ 1843
կտավ, յուղաներկ 68×100
Մ. Սարյանի թանգարան. Երևան

VIII. ԾՈՎԻ ՏԵՍԱՐԱՆ ԼԵՌՆԵՐԻՑ. ԱՐԵՎԱՄՈՒՏ. 1864
կտավ, յուղաներկ 122×170
Պետական Ռուսական թանգարան. Լենինգրադ

IX. ՕԴԵՍԱՅԻ ՏԵՍԱՐՍՆ ԾՈՎԻՑ. 1865, կտավ, յուղաներկ 45×58
Հայաստանի պետական պատկերասրահ. Երևան

X. ՓՈԹՈՐԻԿ ԱՅԱ ՀՐՎԱՆԴԱՆԻ ՄՈՏ. 1875, կտավ, յուղաներկ 215×325
Պետական Ռուսական թանգարան. Լենինգրադ

XI. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՋՐՀԵՂԵՂ. 1864, կտավ, յուղաներկ 246×369
Պետական Ռուսական թանգարան. Լենինգրադ

XII. ԻՆՆԵՐՈՐԴ ԱԼԻՔ. 1850, կտավ, յուղաներկ 221×332
Պետական Ռուսական թանգարան. Լենինգրադ

XIII. ՆԱՎԱԲԵԿՈՒԹՅՈՒՆ. 1864, կտավ, յուղաներկ 58×78
Էջմիածին. Կաթողիկոսարան

XIV. ՓՈԹՈՐԿԻ ՄԵՋ. 1872, կտավ, յուղաներկ 79×94
Հայաստանի պետական պատկերասրահ. Երևան

XV. ՔՐԻՍՏՈՓՈՐ ԿՈԼՈՒՄԲՈՍ. 1880, կտավ, յուղաներկ 208×280
Հայաստանի պետական պատկերասրահ. Երևան

XVI. ԱԼԻՔՆԵՐԻ ՄԵՋ. 1898, կտավ, յուղաներկ 285×429
Թեոդոսիայի Այվազովսկու անվան պատկերասրահ

XVII. ՊՈՄՊԵԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ. 1882, կտավ, յուղաներկ 128×218
Ռոստովի կերպարվեստի թանգարան

XVIII. ՅԱԼԹԱՅԻ ԱՓԵՐԻՆ. 1864, կտավ, յուղաներկ 62×80
Էջմիածին. Կաթողիկոսարան

XIX. ԹԻՖԼԻՍԻ ՏԵՍԱՐԱՆ. 1867, կտավ, յուղաներկ 36×47
Վրացական արվեստի թանգարան. Թբիլիսի

XX. ԲԱՅՐՈՆԻ ԱՅՑԸ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻՆ ՍԲ. ՂԱԶԱՐ ԿՂԶՈՒՄ. ՎԵՆԵՏԻԿ. 1898
կտավ, յուղաներկ 133×218
Վրացական արվեստի թանգարան. Թբիլիսի

XXI. ԵՐԴՈՒՄ. ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐ. 1892, կտավ, յուղաներկ 158×97
Թեոդոսիայի Այվազովսկու անվան պատկերասրահ

XXII. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ. 1892, կտավ, յուղաներկ 158×97
Թեոդոսիայի Այվազովսկու անվան պատկերասրահ

XXIII. ՆՈՅԸ ԻՋՆՈՒՄ Է ԱՐԱՐԱՏԻՑ. 1889, կտավ, յուղաներկ 128×218
Հայաստանի պետական պատկերասրահ. Երևան

XXIV. ՆԿԱՐՉԻ ԿՆՈՋ՝ ԱՆՆԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ-ԱՅՎԱԶՈՎՍԿԱՅԱՅԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ. 1882
կտավ, յուղաներկ 73×62
Թեոդոսիայի Այվազովսկու անվան պատկերասրահ

XXV. ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ՝ Հ. ԽԱԼԻԲՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ. 1862
կտավ, յուղաներկ 63×54
Ռոստովի կերպարվեստի թանգարան

XXVI. ՓՈԹՈՐԿԻ ՄԵՋ. 1899, կտավ, յուղաներկ 152×102
Դաղստանի կերպարվեստի թանգարան. Մախաչկալա

Շապիկի վրա՝ ՓՈԹՈՐԻԿ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎՈՒՄ. 1865, կտավ, յուղաներկ 276×202
Թեոդոսիայի Այվազովսկու անվան պատկերասրահ

ՓՈԹՈՐԿԻ ՄԵՋ (հատված). 1899



II

IV

V

VI



VII

VIII

IX

X

XI

EDITIONS
EREBOUNI



XIII

XIV

XV

XVI

XVII

XVIII

XIX

XXI



XXII

XXIII

XXIV

XXIV

Printed in Finland by Yhteiskirjapaino Oy 1984

Искусство Айвазовского — искусство победы человека и человечности, отрицание деспотизма и насилия. Он художник бурной жажды свободы и ее прославления, великий певец любви к природе.

М. САРЬЯН

Иван (Ованес) Айвазовский занимает особое место в романтическом искусстве XIX века. Двадцати пяти лет от роду он завоевал мировую известность; был избран членом пяти европейских академий и удостоен французского ордена Почетного легиона. Делакруа отзывался о нем с высоким уважением. Тернер называл гением.

Имя Айвазовского неотделимо от моря. «...художник совершенно исключительный,— писал Стасов,— живо чувствующий и самостоятельно передающий ,быть может, как никто в Европе, воду с ее необычайными красотами...»

В лучших морских пейзажах (в наследии Айвазовского, которое насчитывает около шести тысяч картин, есть и работы, явно не соответствующие его возможностям, и полотна исключительной художественной силы) он обнажил свою душу, жившую дыханием времени, и воплотил идеалы борьбы, свободолюбия и пантеистической близости к природе. Таким был художник и в жизни. Симпатии к угнетенным народам, личная помощь обездоленным, многообразная деятельность на благо общества — все это ставит его в ряд поистине исключительных людей, подлинных сынов своего века.

Айвазовский родился в Феодосии, в армянской семье*. Двадцати лет он с золотой медалью окончил Петербургскую академию художеств. Был командирован для усовершенствования в Италию и вернулся европейски прославленным маринистом. Одна-

---

Предки художника носили фамилию Айвазян, его отец — Гайвазовский. В 1841 г. художник и его старший брат Габриэл — известный филолог, историк ,переводчик, религиозный деятель, архиепископ — решили писаться Айвазян либо Айвазовский. Некоторые свои картины художник подписывал по-армянски—Ованес Айвазян.

ко царский дворец и материальное преуспевание не прельстили его. Он едет в родной город, строит на берегу моря дом-студию (1845) и предается любимому делу, работая до последнего дня жизни. Айвазовский почти ежегодно устраивал выставки во многих городах мира. Он снискал себе славу как представитель русского искусства и в значительной степени способствовал его признанию во всем мире.

При этом творчество Айвазовского питали и другие корни, во многом обусловившие его своеобразие и индивидуальность. Н. Новоуспенский пишет: «В его творчестве нашли также выражение черты национального характера и древней культуры армянского народа, верным сыном которого художник оставался до конца своих дней».

В начале второй четверти XIX века, после русско-персидской войны, Восточная Армения вошла в состав России. Западная же Армения по-прежнему оставалась под гнетом Османской Турции. Освободительные движения в Греции и на Балканах стали для армянского народа примером и стимулом. Подъем духовной жизни нашел отражение в литературе и искусстве.

Получая специальное образование в европейских и русских учебных заведениях, армянские художники (Айвазовский был среди них одним из первых) привносили в национальное искусство новые методы изображения и, приспосабливая их к своему темпераменту и представлениям, находили им соответствующее применение. Этот естественный процесс должен был постепенно привести к наиболее чистому проявлению в искусстве национальных черт и особенностей.

Айвазовский так и не освободился до конца от некоторых доктрин академической живописи, но уже в начальный период своего творчества удивительно жизненно и эмоционально воспринимал действительность. Своеобычный живописный язык художника, характеризующийся ошеломляющим мастерством, полностью гармонировал с его творческим методом. Айвазовский сызмала понимал и страстно любил море, знал тайны его движения и никогда не писал с натуры, полагаясь лишь на воображение. Именно на воображении основаны все лучшие работы, придающие его искусству высокую ценность. В сущности Айвазовский не изображал реальное море, а создавал на полотне некую сказку о нем, отдавая морю свои настроения и грезы, и эта «сказка» заключает в себе символический смысл. Одна из отправных точек его искусства — это унаследованное от предков народно-поэтическое, сказочное восприятие природы.

Таким образом, художник, прошедший академическую школу, но романтик в душе, Айвазовский вошел в современное ему искусство, руководствуясь собственными законами миропонимания.

Чарующая световая атмосфера полотен великого мариниста помогает воспринять мечтательность и эмоциональность его искусства. На фоне безбрежной стихии человек порою изображен одиноко шагающим по берегу, порою сидящим у кромки прибоя, устремив вдаль мечтательный взгляд. Возьмем, к примеру, «Мхитаристов на острове св. Лазаря». Своими очертаниями остров напоминает окутанный сумеречным светом корабль, а люди — полных надежд и упований путешественников.

Свет как идея играет в творчестве Айвазовского значительную роль. Внимательный зритель почувствует, что, изображая воду, облака и воздушное пространство, художник по сути дела изображает свет. Свет в его искусстве — символ жизни, надежды и веры, символ вечности. Это не что иное, как по-своему переосмысленная идея созидательного света, света познания, имеющая давние и устойчивые традиции в армянской культуре и получившая блестящее воплощение у позднейших армянских художников. Эти традиции Айвазовский воспринял через средневековые песнопения, которые хорошо знал и постоянно слышал в армянских церквах. На последних его полотнах («Среди волн» и др.) свет ниспускается из невидимого источника, мощным своим снопом прорезая тьму и утверждая надежду.

Виды штормового моря составляют более половины работ Айвазовского. И, как правило, изображая разбушевавшуюся стихию, художник изображает борющихся против нее, помогающих друг другу людей. Человек не сдается, человек победит — в этом девизе художника отразился свойственный его народу оптимизм и жизнестойкость. Основа романтики Айвазовского — вера человека, «пылинки вселенной», в природу и жизнь, несокрушимая вера в родной народ, который в политических штормах XIX века упорно боролся за самоутверждение.

Творческое кредо художника, заключающееся в духе борьбы и свободы, с одной стороны, выражало запросы эпохи, а с другой — питалось собственными корнями, уходящими в судьбу и историю армянского народа. Вдохновленный борьбой греков против турецкого деспотизма, Айвазовский мечтал и об освобождении родного народа, связывая его со страной, сыном и одним из признанных деятелей которой был он сам. Вот почему сыновняя любовь к России была одновременно и проявлением тех чувств, которые он питал к Армении. В воспетой им победе русского флота Айвазовский видел надежду на спасение родного народа.

В 1895 году, задавшись целью снять с повестки дня «армянский вопрос», султан Абдул Гамид учинил резню, жертвами которой пали сотни тысяч невинных людей. Разрушались и предавались огню многочисленные памятники культуры. Эти чудовищные события потрясли старого художника. «Глубокой болью омрачила мое сердце невиданная и неслыханная резня несчастных армян»,— писал он в Эчмиадзин католикосу Хримяну. Айвазовский швырнул в море, пожалованный ему турецкий орден. Написал и выставил ряд картин, посвященных армянским погромам. Болью и гневом дышит и картина «Взрыв турецкого корабля», созданная в последний день жизни художника — 2 мая 1900 года и оставшаяся незаконченной.

Дом Айвазовского в Феодосии стал своего рода местом паломничества. Здесь гостили армянские писатели, на сцене большого выставочного зала выступали армянские актеры и музыканты. Здесь получили творческое благословение художники Г. Башинджагян, В. Суренянц, В. Махохян, А. Шабанян, Э. Магдесян, М. Дживанян. Айвазовский активно пропагандировал армянское искусство, мечтал создать союз, вокруг которого сплотились бы рассеянные по всему миру художники-армяне.

В течение своей долгой творческой жизни, особенно после совершенного в 1868 г. путешествия по Закавказью, Айвазовский создал десятки картин на армянскую тему. Пейзажи с изображением тифлисского быта, озера Севан, Арарата и Араратской долины положили начало и стимулировали развитие этого жанра в армянской живописи. Принадлежа по вероисповеданию армянской апостольской церкви, Айвазовский написал целый ряд картин на темы Библии, а также армянской истории (две из них — №№ 21 и 22 — в свое время находились в одной из феодосийских церквей), преследуя цель пробудить в народе патриотические чувства.

Обозревая творчество Айвазовского в его целостности, следует сказать, что без него невозможно рассматривать армянское искусство XIX века. А глядя на Айвазовского только как на русского художника, не учитывая армянских истоков его живописи, нельзя полностью понять его творческую индивидуальность. Вот почему, принадлежа русской культуре, он в равной степени принадлежит и культуре армянской. Более того, творчество великого певца моря воспринимается сегодня как одно из ярчайших проявлений тесной связи русской и армянской культур.

Согласно завещанию Айвазовского его погребли в Феодосии, во дворе армянской церкви св. Саргиса. Надгробная надпись — слова из «Истории Армении» Мовсеса Хоренаци — гласит: «Родился смертным, оставил по себе бессмертную память». В нашей памяти об Айвазовском сосредоточено драгоценнейшее достояние и его эпохи, и всех времен — дух гуманизма.

ШАЭН ХАЧАТРЯН

Այվազովսկու տուն-թանգարանը Թեոդոսիայում

Дом-музей Айвазовского в Феодосии

I. ХАОС. СОТВОРЕНИЕ МИРА. 1841. Холст, масло 73×108
Музей конгрегации Мхитаристов. Остров св. Лазаря. Венеция

II. ПЕТР I ПОДАЕТ СИГНАЛ ГИБНУЩИМ КОРАБЛЯМ. 1846.
Холст, масло 223×335
Гос. Русский музей. Ленинград.

III. БЕРЕГ МОРЯ. 1840. Холст, масло 43×61
Гос. Третьяковская галерея. Москва

IV. ВИД КОНСТАНТИНОПОЛЯ ПРИ ЛУННОМ ОСВЕЩЕНИИ. 1846.
Холст, масло 124×192
Гос. Русский музей. Ленинград

V. БУРЯ У ЕВПАТОРИИ. 1841. Холст, масло 208×320
Екатерининский дворец-музей. Пушкин

VI. ВОСХОД СОЛНЦА В ФЕОДОСИИ. 1855. Холст, масло 82×117
Гос. картинная галерея Армении. Ереван

VII. АРМЯНЕ-МХИТАРИСТЫ НА ОСТРОВЕ СВ. ЛАЗАРЯ, ВЕНЕЦИЯ. 1843.
Холст, масло 68,5×100
Музей М. Сарьяна, Ереван

VIII. ВИД МОРЯ С ГОР ПРИ ЗАКАТЕ СОЛНЦА. 1864. Холст, масло 122×170
Гос. Руссский музей. Ленинград

IX. ВИД ОДЕССЫ С МОРЯ. 1865. Холст, масло 45×58
Гос. картинная галерея Армении. Ереван

X. БУРЯ У МЫСА АЙА. 1875. Холст, масло 215×325
Гос. Русский музей. Ленинград

XI. ВСЕМИРНЫЙ ПОТОП. 1864. Холст, масло 246×369
Гос. Руссский музей. Ленинград

XII. ДЕВЯТЫЙ ВАЛ. 1850. Холст, масло 221×332
Гос. Русский музей. Ленинград

XIII. КОРАБЛЕКРУШЕНИЕ. 1864. Холст, масло 58×78
Эчмиадзин. Католикосат

XIV. В БУРЮ. 1872. Холст, масло 72×94
Гос. картинная галерея Армении. Ереван

XV. ХРИСТОФОР КОЛУМБ. 1880. Холст, масло 285×429
Гос. картинная галерея Армении. Ереван

XVI. СРЕДИ ВОЛН. 1898. Холст, массло 285×429
Феодосийская картинная галерея им. Айвазовского

XVII. ГИБЕЛЬ ПОМПЕИ. 1882. Холст, масло 128×218
Ростовский музей изобразительных искусств

XVIII. У БЕРЕГОВ ЯЛТЫ. 1864. Холст, масло 62×80
Эчмиадзин. Католикосат

XIX. ВИД ТИФЛИСА. 1867. Холст, масло 36×47
Гос. музей искусств Грузии. Тбилиси

XX. ПОСЕЩЕНИЕ БАЙРОНОМ МХИТАРИСТОВ НА ОСТРОВЕ СВ. ЛАЗАРЯ. ВЕНЕЦИЯ. 1898. Холст, масло 133×218
Гос. музей искусств Грузии. Тбилиси

XXI. КЛЯТВА. ПОЛКОВОДЕЦ ВАРДАН МАМИКОНЯН. 1892. Холст, масло 158×97
Феодосийская картинная галерея им. Айвазовского

XXII. КРЕЩЕНИЕ АРМЯНСКОГО НАРОДА. 1892. Холст, масло 158×97
Феодосийская картинная галерея им. Айвазовского

XXIII. НОЙ СПУСКАЕТСЯ С ГОРЫ АРАРАТ. 1889. Холст, масло 128×218
Гос. картинная галерея Армении. Ереван

XXIV. ПОРТРЕТ ЖЕНЫ ХУДОЖНИКА АННЫ БУРНАЗЯН-АЙВАЗОВСКОЙ. 1882.
Холст, масло 73×62
Феодосийская картинная галерея им. Айвазовского

XXV. ПОРТРЕТ А. ХАЛИБЯНА, ГРАДОНАЧАЛЬНИКА НОВОГО НАХИЧЕВАНА. 1862
Холст, масло 63×54
Ростовский музей изобразительных искусств

XXVI. В БУРЮ. 1899. Холст, масло 152×102
Дагестанский музей изобразительных искусств. Махачкала

На обложке:

БУРЯ НА СЕВЕРНОМ МОРЕ. 1865. Холст, масло 276×202
Феодосийская картинная галерея им. Айвазовского

В БУРЮ (фрагмент). 1899

Մատենաշարի խմբագիր՝ Շ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Նկարիչ՝ Վ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
«Էրեբունի» հրատարակչության տնօրեն՝ Վ. ԿԱՐԱԳԵՈՉՅԱՆ

Редактор серии Ш. Г. Хачатрян
Художник В. Татевосян
Директор издательства «Эребуни» В. Карагезян

«Վրձնի հայ վարպետներ» շարքի տեքստերը տպագրված են
Երևանի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատում
(Երևան-9, Տերյան, 91)

Գունավոր վերատպությունների համար, որոնք տպվել են Ֆինլանդիայում
իբրև նվիրատվություն, Մշակույթի հայկական ֆոնդը շնորհակալություն է
հայտնում «Էրեբունի» հրատարակչությանը:

Тексты альбомов из серии «Армянские мастера кисти» напечатаны на
Ереванском полиграфкомбинате им. Акопа Мегапарта (Ереван-9,
ул. Теряна, 91).

За цветные репродукции, безвозмездно напечатанные в Финляндии,
Армянский фонд культуры приносит благодарность издательству
«Эребуни».

Հարգելի գնորդ, «Վրձնի հայ վարպետներ» շարքի ձեռք բերումով
(յուրաքանչյուրի արժեքն է 2 ռուբլի), Դուք ձեր նպաստը կբերեք
Մշակույթի հայկական ֆոնդի հայրենանվեր ձեռնարկումներին:

Уважаемый покупатель, приобретая альбомы из серии «Армянские мастера кисти» (каждый стоимостью по 2 рубля), Вы вносите свою лепту в патриотическую деятельность Армянского фонда культуры.